ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՄԱՍՐԻԿ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ԴԱՍՂԵԿ՝ Գ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն(դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանը բաղկացած է 14 աշակերտից՝ 4 աղջիկ, 10 տղա:Դասարանը ակտիվ է,համերաշխ,կա փոխադարձ հարգանք:

Աշակերտները սիրում և օգնում են միմյանց, ակտիվորեն մասնակցում տարաբնույթ միջոցառումների, դասի ընթացքին, հաճա-

խում տարբեր խմբակների: Անցած ուսումնական տարում բարձր առաջադիմությամբ աչքի ընկան ութ սովորողներ, որոնք

պարգևատրվեցին գովասանագրերով:

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական

աշխատանքները

ա.Հիմնական ուշադրությունը դարձնել աշակերտական կոլեկտիվի կազմակերպման և համախմբման

վրա:

բ Հասնել դասարանի բոլոր սովորողների գիտելիքների որակի բարձրացման:

գ.Պայքարել աշակերտների կարգապահության, ուսման և աշխատանքի նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի համար:

դ.Սովորողների մեջ դաստիարակել հայրենասիրության զգացում,զարգացնել հետաքրքրություն մեր հայրենիքի հերոսական անցյալի նկատմամբ:

ե.Զարգացնել հետաքրքրություն և ձգտում գեղարվեստական գործունեության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու նկատմամբ:

3. Հայեցի դաստիարակություն

3.1 -Հոգևոր դաստիարակություն

Հետևել,որպեսզի երեխաների հոգևոր դաստիարակությունը ընթանա ճիշտ ուղով, երեխաները հարգանքով վերաբերվեն իրենց նախնիների թողած

հոգևոր ժառանգությանը:Կարողանան ճիշտ գնահատեն և պահպանեն ազգային արժեքները:

3.2 –Գեղագիտական դաստիարակություն

Երեխաների մեջ ձևավորել գեղագիտական բարձր ճաշակ:Այցելել թանգարաններ,ցուցահանդեսներ:Երեխաների հետ դիտել ֆիլմեր,ալբոմներ,որտեղ

ամփոփված են արվեստի մեծագույն արժեք ներկայացնող գործերը:

3. 3-Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն:
Սովորողների մեջ դաստիարակել հայրենասիրական զգացում, զարգացնել հետաքրքրություն մեր հայրենիքի հերոսական անցյալի նկատմամբ,կոնկրետ օրինակի հիման վրա բացահայտել մեր հայրենիքի ազատության և անկախության համար մարտնչող մարտիկների սխրանքների վեհությունը:

3.3 –Ֆիզիկական դաստիարակություն
Կարևորելով սովորողների առողջության հարցերը, առաջացնել հետաքրքրություն դեպի սպորտը:Մասնակցել դպրոցում կազ-
մակերպվող սպորտային միջոցառումներին:

3.4 –Աշխատանքային դաստիարակություն
Աշակերտներին բացատրել մեծերի աշխանանքի նշանակությունը և օգտակարությունը, նրանց մեջ դաստիարակել հարգանք
մեծերի աշխատանքի և աշխատավորության նկատմամբ, նրանց մեջ սերմանել աշխատասիրություն, ազնվություն, ճշմարտա-
ցիություն, մշակել ինքնասպասարկման հմտություններ:

3.5 –Բնապահպանական դաստիարակություն
Սերմանել սեր դեպի բնություն:Կատարել շրջակա միջավայրի մաքրման աշխատանքներ:Կարևորել բնության և մթնոլոլտի դերն
ու նշանակությունը կենդանի օրգանիզմների համար և պայքարել դրանց աղտոտման դեմ:

3.6 -Դպրոց-ընտանիք կապը

Ծնողական ակտիվին ներգրավել աշակերտների հետ տարվող աշխատանքներում:Կապ պահպանել սովորողի բնակավայրի ծնողական կոմիտեի հետ:Այցելել սովորողների տները և օգնել ծնողին՝ դպրոցականի անկյուն կազմակերպելու գործում:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս/շ	Ուս.աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող
I	Հրավիրել ծնողական ժողով:Ընտրել ծնողկոմիտեի նախագահ և անդամներ:		Դասղեկ, ծնողներ
II	Հրավիրել դասարանական ժողով և քննարկել առաջիկա անելիքները և ուսումնառության հետ կապված հարցեր:		Դասղեկ, աշակերտներ Դասղեկ, աշակերտներ
III	Զրույց՝ <<Քանի լեզու գիտես այնքան մարդ ես>> թեմայի շուրջ:		Դասղեկ, աշակերտներ
IV	Կարողությունների և հմտությունների մասին քննարկում:		Դասղեկ, աշակերտներ
V	<<Ես էլ քեզ նման եմ>> թեմայով զրույց:		Դասղեկ, աշակերտներ
VI	<<Բնական աղետներ>> թեմայով քննարկում:		Դասղեկ, աշակերտներ
VII	Քննարկել աշակերտների իրավունքները և պարտավորությունները դպրոցում:Վերանայել սեփական վարքը:		Դասղեկ, աշակերտներ
VIII	Զրույց <<Մայր հայրենիք>> թեմայիով:		Դասղեկ, աշակերտներ
IX	Էկոլոգիական հիմնախնդիրների մասին քննարկում:		Դասղեկ, աշակերտներ
X	Քննարկել դասարանում առկա խնդիրները և աշխատանքներ տանել այդ ուղղությամբ:		Դասղեկ, աշակերտներ
XI	<<Գնահատել ինքդ քեզ >> թեմայով զրույց կազմակերպել և արժևորել սեփական կարողությունները, հետաքրքրությունները:		Դասղեկ, աշակերտներ
XII	Թեմատիկ քննարկումներ <<Ազգ և բանակ>> համակարգի վերաբերյալ:		Դասղեկ, աշակերտներ
XIII	Համերաշխություն և ընկերասիրություն թեմայով զրույց:		Դասղեկ, աշակերտներ
XIV	Ազգային տոներ և ծեսեր թեմայով զրույց:		Դասղեկ, աշակերտներ
XV	Եկեղեցի և պետականություն թեմայով դասախոսություն:		Դասղեկ, աշակերտներ
XVI	Լրատվամիջոցների դերը հասարակության մեջ:		Դասղեկ, աշակերտներ

XVII	Ծնող-երեխա փոխհարաբերությունների մասին զրույց:		Դասղեկ, աշակերտներ
XVIII	Խաղաղություն և պատերազմ թեմայով զրույց:		Դասղեկ, աշակերտներ
XIX	<<Ինչ է գեղեցիկը...>> թեմայով քննարկում:		Դասղեկ, աշակերտներ
XX	Զրույց ապագա մասնագիտության ընտրության մասին:		Դասղեկ, աշակերտներ
XXI	Քննարկումներ ուսումնառության,վարքի և հաճախումների վերաբերյալ:		Դասղեկ, աշակերտներ
XXII	Ընթերցանության դերի մասին զրույց:		Դասղեկ, աշակերտներ
XXIII	<<Ինչ է երաժշտական ճաշակը>> թեմայով քննարկում:		Դասղեկ, աշակերտներ
XXIV	Կանանց տոնին նվիրված զրույց:		Դասղեկ, աշակերտներ
XXV	<<Սուրբ Զատիկ>> տոնի խորհուրդը թեմայով զրույց:		Դասղեկ, աշակերտներ
XXVI	Զրույց <<Հանդուրժողականություն և համբերատարություն>> թեմայով քննարկում:		Դասղեկ, աշակերտներ
XXVII	Զրույց <<Ինչպես կառավարել սեփական ժամանակը>> թեմայով:		Դասղեկ, աշակերտներ
XXVIII	<<Ինչ է պատասխանատվությունը>> թեմայով զրույց:		Դասղեկ, աշակերտներ
XXIX	<<Բնություն և մարդ>> կապը:		Դասղեկ, աշակերտներ
XXX	<<Ինչպես խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից>>		Դասղեկ, աշակերտներ
XXXI	<<Կրթության դերը մարդու կյանքում>>		Դասղեկ, աշակերտներ
XXXII	Զրույց էթիկայի կանոնների պահպանման վերաբերյալ :		Դասղեկ, աշակերտներ
XXXIII	Ամփոփել տարեկան գնահատականները և առաջադիմության վերաբերյալ :		Դասղեկ, աշակերտներ
XXXIV	Ծնողական ժողովի հրավիրում:Երկու կիսամյակների արդյունքների ամփոփում:		Դասղեկ, աշակերտներ

ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ,ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

Անցկացման ժամկետը	Միջոցառման անվանումը	Անցկացման վայրը

Ուսումնական տարվա ընթացքում	Ֆուտբոլային տարածքային մրցախաղեր	Տարածքային ստադիոն
Մարտ-հունիս	Կազմակերպել էքսկուրսիաներ պատմական և մշակութային վայրեր (թանգարան, ցուցահանդես, կինոթատրոն և այլն):	
Դեկտեմբեր-փետրվար	Մասնակցություն առարկայական օլիմպիադաների:	Ուսումնական հաստատություններ

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օ/ա/տ	Միջոցառման բովանդակությունը	Ծանոթություն
06 սեպտեմբեր 2022	Զրույց նոր ուստարվա խնդիրների և սովորողների արտաքին կեցվածքի հետ կապված հարցերի շուրջ:	
12 սեպտեմբեր 2022	Զրույց «Կրթության անհրաժեշտությունը և յուրաքանչյուր առարկայի կարևորությունը»:	
20 սեպտեմբեր 2022	Զրույց «Ազատություն և անկախություն:	
27 սեպտեմբեր 2022	Զրույց-քննարկում «Ի՞նչ է համերաշխությունը և ընկերասիրությունը»:	
4 հոկտեմբեր 2022	Դասախոսություն «Ուսուցչի դերը կրթության գործընթացում»:	

11 հոկտեմբեր 2022	Սովորողների հետաքրքրությունների, ձգտումների բացահայտումը անհատական թերթիկների միջոցով:	
18 հոկտեմբեր 2022	Ստեղծագործական շարադրություն «Իմ սրտի Երևան»:	
1 նոյեմբեր 2022	Քննարկում «Ինչպիսի՞ն եմ ես» (բացահայտել իրենց ուժեղ և թույլ կողմերը):	
8 նոյեմբեր 2022	Զրույց «Պատահական իրադարձությունները (պատահույթները) մեր կյանքում»:	
15 նոյեմբեր 2022	Զրույց-քննարկում «Ես քաղաքացին եմ ողջ աշխարհի»:	
22 նոյեմբեր 2022	Զրույց «Ձեռնարկատիրություն և ռիսկ»:	
29 նոյեմբեր 2022	Քննարկում «Ո՞վ է իսկական ընկերը»:	
6 դեկտեմբեր 2022	Իրազեկման դաս-քննարկում «Բնական աղետներից պաշտպանվելու եղանակները»:	
13 դեկտեմբեր 2022	Զրույց-քննարկում «Ես և ուրիշները»:	
20 դեկտեմբեր 2022	Զրույց-քննարկում «Կիսամյակի ընթացքում իմ ձեռքբերումները»:	
13 հունվար 2023	Զրույց-քննարկում «Գրիպը և նրա կանխարգելումը»:	
20 հունվար 2023	Զրույց «Բոլորս տարբեր ենք, և դա մեր հարստությունն է»:	
27 հունվար 2023	Դասախոսություն «Ազգ և պետություն»ն:	
3 փետրվար 2023	Քննարկում «Ազգային և միջազգային տոներ»:	
10 փետրվար 2023	Այց Երևանի գեղասահքի և հոկեյի մարզադպրոց:	
17 փետրվար 2023	Գրական ժամ «Թումանյանը և նրա ստեղծագործությունները»:	
24 փետրվար 2023	Զրույց-քննարկում «Սպորտի առավելությունները ֆիզիկական և մտավոր առողջության վրա»:	
3 մարտ 2023	Զրույց-քննարկում «Հայկական մշակույթը և թատրոնը»:Ներկայացման դիտում Գոյ թատրոնում:	

10 մարտ 2023	Քննարկում «Մաթեմատիկան և անհավանականը»:	
17 մարտ 2023	Զրույց-քննարկում «Բնական պաշարներ»:	
24 մարտ 2023	Զրույց «Ես էլ քեզ նման եմ»:	
7 ապրիլ 2023	Զրույց «Ի՞նչ է խտրականությունը»:	
14 ապրիլ 2023	Դասախոսություն«Երկիր մոլորակի միջազգային օրը»:	
21 ապրիլ 2023	Զրույց էթիկայի կանոնների շուրջ:	
28 ապրիլ 2023	Զրույց «Ճանապարհային երթևեկության կանոնները»:	
5 մայիս 2023	Զրույց-քննարկում «Հայ ժողովրդի պատմության հաղթական էջերը:	
12 մայիս 2023	Քննարկում «Ես և ուրիշները:	
19 մայիս 2023	Զրույց «Ինչպե՞ս վարվել բնության հետ:	
26 մայիս 2023	Ամփոփիչ դաս:	

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցկացման օրը	Քննարկվող հարցերը	Համառոտ բովանդակությունը	ծանոթություն
9.09.2022	2022-23ուստարվա խնդիրները:Ծնողական խորհրդի կազմի ընտրություն:	6-րդ դասարանի պահանջները,խնդիրները,դասա գրքերի վարձավճարները և ժամկետները,սովորողների որոշ տվյալների գրանցում,ծնող.կոմիտեի նախագահի և անդամների ընտրություն:	

26.05.2023	2022-2023 ուստարվա ամփոփում, այլ հարցեր:	Ծնողներին ներկայացնել ուստարվա ընթացքում կատարված աշխատանքները,յուրաքանչյուր սովորողի առաջադիմությունը,հաջողությունները:Լսել ծնողկոմիտեի հաշվետվությունը:	

Դասղեկ՝_____ Գևորգ Հովսեփյան _____